

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»**  
**ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ**  
**ԱՐՎԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**



## **Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

*/հաստատվել է արհեստակցական կազմակերպության 2021 թվականի փետրվարի ....-ի համաժողովում/*

**ԿԱՊԱՆ 2021**

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպությունն իր բնականոն գործունեությունն է իրականացրել ՀՀ օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան՝ պահպանելով Կազմակերպության գործունեության օրինականության, կամավորության, համերաշխության, իրավահավասարության, կոլեգիալության, ժողովրդավարության, հրապարակայնության սկզբունքները:

Մասնավորապես.

1. Ներկայացրել է Կազմակերպության անդամների շահերը և պաշտպանել նրանց իրավունքներն աշխատանքային հարաբերություններում:
2. Ներկայացրել է առաջարկություններ՝ աշխատողների աշխատանքի պայմանների բարելավման վերաբերյալ:
3. Մասնաճյուղի հետ համագործակցել է Կազմակերպության անդամների պարզևատրման և խրախուսման հարցերում:
4. Միավորել է Կազմակերպության անդամների ջանքերը և համակարգել գործողությունները Կազմակերպության նպատակների իրականացման համար:
5. Սահմանված կարգով վարել է գործավարությունը և հաշվապահական հաշվառումը:
6. 2020 թվականի սեպտեմբեր 25-ից ձեռք է բերվել «Ամերիաբանկ» ՓԲԸ ինտերնետ (մոբայլ) բանկինգ ծառայությունը, որից հետո բանկային բոլոր գործարքներն իրականացվել են այդ ծառայության միջոցով:
7. Նպատակաուղղել է Կազմակերպության միջոցները Կազմակերպության անդամների համար ծրագրերի իրականացմանը:
8. Հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեն գումարել է **12 նիստ**, քննարկել **38 հարց** և ընդունել **57 որոշում**: Իր գործունեության մասին եռամսյա պարբերականությամբ իրազեկել է Կազմակերպության անդամներին՝ հրապարակելով այն ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի պաշտոնական կայքի «Արհեստակցական կազմակերպություն» բաժնում:
9. **2020 թվականի սեպտեմբերի 17-ի համաժողովում** քննարկվել և հաստատվել է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության **2019թ.-ի տարեկան գործունեության մասին հաշվետվությունը, սեփականության օգտագործման 2019թ.-ի տարեկան հաշվետվությունը և արհեստակցական կազմակերպության 2019թ.-ի կանոնադրական և ֆինանսական գործունեության սրուգումների վերաբերյալ Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը**:
10. Նույն **համաժողովում** (17.09.2020թ.) քննարկվել և հաստատվել են «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի

արհեստակցական կազմակերպության **2019թ.-ի տարեկան բյուջեի կարարողականը և 2020թ.-ի տարեկան բյուջեի նախահաշվը**, հաստատվել է **արհեստակցական կազմակերպության յուրաքանչյուր ծրագրին 2020 թվականին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները**:

11. 17.09.2020թ.-ի համաժողովի որոշմամբ արհեստակցական կազմակերպության 2020թ.-ի ծրագրերի իրականացման համար հատկացվել է **835 000 ՀՀ դրամ** (2019թ.-ին՝ 695 000 ՀՀ դրամ), որից ծախսվել է **825 200 ՀՀ դրամ** (2019թ.-ին՝ 510 270 ՀՀ դրամ). **«Ուրախություն և տոն»** ծրագրով՝ **672 200 ՀՀ դրամ**, **«Սոցիալական օգնություն»** ծրագրով՝ **60 000 ՀՀ դրամ**, **«Առողջության պահպանում»** ծրագրով՝ **50 000 ՀՀ դրամ**, **«Մշակույթ, սպորտ և հանգիստ»** ծրագրով՝ **33 000 ՀՀ դրամ** և **«Ուշադրություն»** ծրագրով՝ **10 000 ՀՀ դրամ**: Մասնավորապես.
  - 10.1. **«Ուրախություն և տոն»** ծրագրով, Բանակի օրվա կապակցությամբ, արհեստակցական կազմակերպության 19 տղամարդ անդամներին տրվել են դրամական նվեր՝ յուրաքանչյուրին 5 000 ՀՀ դրամի չափով, որի համար հատկացվել է 100 000 ՀՀ դրամ (17x5 000դր.+1x10 000դր.+1x15 000դր.):
  - 10.2. **«Ուրախություն և տոն»** ծրագրով, Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ, արհեստակցական կազմակերպության 38 կին անդամներին տրվել են դրամական նվեր՝ յուրաքանչյուրին 5 000 ՀՀ դրամի չափով, որի համար հատկացվել է 190 000 ՀՀ դրամ (38x5000 դր.):
  - 10.3. **«Ուրախություն և տոն»** ծրագրով, Նոր տարվա կապակցությամբ արհեստակցական կազմակերպության 55 անդամներին տրվել են դրամական նվեր՝ յուրաքանչյուրին 5 000 ՀՀ դրամի չափով, որի համար հատկացվել է 275 000 ՀՀ դրամ (55x5000 դր.):
  - 10.4. Արհեստակցական կազմակերպության **«Ուրախություն և տոն»** ծրագրով /ծննդյան հոբելյանական տարեդարձ/ կազմակերպության 5 անդամի տրվել է դրամական նվերներ 70 000 ՀՀ դրամի չափով:
  - 10.5. Արհեստակցական կազմակերպությունը, **«Ուրախություն և տոն»** ծրագրով, Նոր տարվա կապակցությամբ կազմակերպության անդամների՝ մինչև 11 տարեկան 20 երեխաներին և 40 թոռներին տվել է ամանորյա նվերներ՝ քաղցրավենիքի տոպրակի տեսքով, որի համար հատկացվել է 37 200 ՀՀ դրամ:
  - 10.6. **«Ուշադրություն»** ծրագրով, կազմակերպության մեկ նախկին անդամի՝ կազմակերպության ծրագրերի կանոնակարգի 3.5 կետով տրվել է դրամական նվեր 10 000 ՀՀ դրամի չափով:
  - 10.7. **«Մշակույթ, սպորտ և հանգիստ»** ծրագրով, կազմակերպության 11 անդամների համար Շաքիի ջրվեժ էքսկուրսիա կազմակերպելու նպատակով հատկացվել է 33 000 ՀՀ դրամ:

10.8. Կազմակերպության «Սոցիալական օգնություն» ծրագրով /մոտ հարազատի մահ/ տրամադրվել է դրամական օգնություն 30 000 ՀՀ դրամ:

11. Արհեստակցական կազմակերպության 2019 թվականի եկամուտների նախահաշիվը և կատարողականը բերված են աղյուսակ 1-ում, իսկ ծախսերի նախահաշիվը և կատարողականը՝ աղյուսակ 2-ում:

1) Կազմակերպության դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին կազմել է 378 902 ՀՀ դրամ (բանկային հաշվեհամարում՝ 377 750 ՀՀ դրամ, դրամարկղում՝ 1 152 ՀՀ դրամ), ընթացիկ տարվա մուտքերը կազմել են 717 195 ՀՀ դրամ (ըստ նախահաշվի՝ 637 000 ՀՀ դրամ), իսկ ընդամենը եկամուտները՝ 1 096 097 ՀՀ դրամ (ըստ նախահաշվի՝ 1 015 902 ՀՀ դրամ):

2) Կազմակերպության ծրագրերով իրականացվել է 825 200 ՀՀ դրամի ծախս, այլ ծախսերը կազմել են 5 200 ՀՀ դրամ (պետական տուրք՝ 5 000 ՀՀ դրամ, բանկային ծախս՝ 200 ՀՀ դրամ), իսկ ընդամենը ծախսերը՝ 830 400 ՀՀ դրամ:

3) 2021 թվականի եկամուտների բյուջե տեղափոխված դրամական միջոցների մնացորդը կազմել է 265 697 ՀՀ դրամ:

**ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության  
2019 թվականի եկամուտների նախահաշիվը և կատարողականը**

Աղյուսակ 1

Հ/Հ	Եկամուտներ	ՀՀ դրամ	
1.	Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին	<b>378 902</b>	
2.	<b>Ընթացիկ տարվա մուտքեր, այդ թվում</b>	նախահաշիվ	637 000
		<b>կատարողական</b>	<b>717 195</b>
		կատարող. %	112,59
2.1	Անդամավճար	նախահաշիվ	636 000
		<b>կատարողական</b>	<b>716 195</b>
		կատարող. %	112,61
2.2	Մուտքի վճար	նախահաշիվ	1 000
		<b>կատարողական</b>	<b>1 000</b>
		կատարող. %	100
	<b>Ընդամենը</b>	նախահաշիվ	1 015 902
		<b>կատարողական</b>	<b>1 096 097</b>
		կատարող. %	107,89

Ընթացիկ տարվա մուտքերի գերհավաքագրումը պայմանավորված է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի կողմից 2019 թվականի՝ ուշացված մեկ ամսվա անդամավճարների փոխանցումը 2020 թվականին կատարելու հանգամանքով:

**ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության  
2019 թվականի ծախսերի նախահաշիվը և կատարողականը**

*Աղյուսակ 2*

Հ/Հ	Ծախսերի անվանումը	ՀՀ դրամ	
1.	Արհեստակցական կազմակերպության ծրագրեր	նախահաշիվ	835 000
		<b>կատարողական</b>	<b>825 200</b>
		<i>կատարող. %</i>	<i>98,83</i>
2.	Խրախուսման ծախսեր	նախահաշիվ	50 000
		<b>կատարողական</b>	<b>0</b>
		<i>կատարող. %</i>	<i>0</i>
3.	Գործուղման ծախսեր	նախահաշիվ	30 000
		<b>կատարողական</b>	<b>0</b>
		<i>կատարող. %</i>	<i>0</i>
4.	Գրասենյակային ծախսեր	նախահաշիվ	15 000
		<b>կատարողական</b>	<b>0</b>
		<i>կատարող. %</i>	<i>0</i>
5.	Տպագրական ծախսեր	նախահաշիվ	3 000
		<b>կատարողական</b>	<b>0</b>
		<i>կատարող. %</i>	<i>0</i>
6.	Փոստային ծախսեր	նախահաշիվ	2 000
		<b>կատարողական</b>	<b>0</b>
		<i>կատարող. %</i>	<i>0</i>
7.	Պետական տուրքեր	նախահաշիվ	25 000
		<b>կատարողական</b>	<b>5 000</b>
		<i>կատարող. %</i>	<i>20</i>
8.	Այլ ծախսեր (բանկի գործառնական ծախսեր)	նախահաշիվ	30 000
		<b>կատարողական</b>	<b>200</b>
		<i>կատարող. %</i>	<i>27,6</i>
<b>Ընդամենը</b>	նախահաշիվ	990 000	
	<b>կատարողական</b>	<b>830 400</b>	
	<i>կատարող. %</i>	<i>83,88</i>	

*Արհեստակցական կազմակերպության նախագահ՝*

*Գ.Վ. Գալստյան*